

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 17.05.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 30 (երեսուն) անդամից 21-ը (քսանմեկը):

Նիստին մասնակցում էին՝

- 1. Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
- 2. Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
- 3. Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
- 4. Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
- 5. Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
- 6. Մելքոնյան Հովիկ Մենքերիմի** – Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
- 7. Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
- 8. Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
- 9. Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
- 10. Քալաջյան Ռաֆֆի Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
- 11. Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
- 12. Հայրապետյան Սերգո Արտուշի** -Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
- 13. Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
- 14. Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
- 15. Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ

- 16. Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
- 17. Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
- 18. Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
- 19. Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
- 20. Հովհաննիսյան Լիլիթ Գոռի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 4-րդ կուրսի ուսանողուհի
- 21. Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռեզմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 4-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. Հետազոտողի կրթական ծրագրով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (մաթեմատիկա)» (դասիչ՝ ԺԳ.00.02) մասնագիտությամբ հայցորդ Գոհար Կամոյի Բարսեղյանի ուսումնառության ժամկետների երկարաձգման, ՇՊՀ-ի Գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնական-հետազոտական անհատական պլանի փոփոխման և հաստատման մասին

Հաղ.՝ Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա.

Սարգսյան

2. ՇՊՀ գիտական խորհրդին առնչվող կազմակերպչական հարցերի մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

3. Ընթացիկ հարցեր

3.1 Հեռակա կրթական համակարգով սովորող ուսանողների տեղափոխվող ակադեմիական պարտքերի վարձավճարի մասին (ի փոփոխումն 07.02.2019թ.-ի թիվ 10/5 գիտական խորհրդի որոշման)

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

1. ԼՍԵՑԻՆ՝

Հետազոտողի կրթական ծրագրով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (մաթեմատիկա)» (դասիչ՝ ԺԳ.00.02) մասնագիտությամբ հայցորդ Գոհար Կամոյի Բարսեղյանի ուսումնառության ժամկետների երկարաձգման, ՇՊՀ-ի Գիտական խորհրդի՝ 2018թ.-ի փետրվարի 12-ի նիստում հաստատված ուսումնական-հետազոտական անհատական պլանի փոփոխման և հաստատման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել հետազոտողի կրթական ծրագրով «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (մաթեմատիկա)» (դասիչ՝ ԺԳ.00.02) մասնագիտությամբ հայցորդ Գոհար Կամոյի Բարսեղյանի ուսումնական-հետազոտական անհատական պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21անդամ. կողմ՝ 21 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ գիտական խորհրդին առնչվող կազմակերպչական հարցերի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ գիտական խորհրդի անդամներին հայտնի է, որ ՇՊՀ կանոնադրության որոշ կետերի փոփոխության հետ կապված բուհում ձևավորվել էր

հանձնաժողով, արդյունքում կանոնադրության 49 և 50 ենթարկվել են փոփոխության, ըստ որի էլ փոփոխության է ենթարկնել համալսարանի գիտական խորհրդի և կառուցվածքը, և կազմը, և անդամների թվաքանակը: Այնուհետև պարոն Սերոբյանը շարունակեց գիտական խորհրդի կետի հստակեցման և փոփոխված կանոնադրության պետական ռեգիստրում ապրիլի 16-ին գրանցման իրողությամբ պայմանավորված, գիտական խորհրդի կազմը լուծարվելու է և նոր կազմ ձևավորելու անհրաժեշտություն է առաջացել: Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը հոգաբարձուների խորհրդին պետք է դիմի այս հարցի առնչությամբ, այդ իսկ պատճառով գիտական խորհրդի անդամներին տեղեկացնում է այս մասին: Նա Նշեց նաև, որ բոլորն էլ լսել են խոսակցություններ այն մասին, որ գիտական խորհուրդը ոչ լեգիտիմ է և նույնիսկ հոգաբարձուների խորհրդի վերջին նիստին ինքը խնդրել է այլևս չկրկնել այս միտքը, քանի որ կանոնադրությունը հստակեցման փուլում է գտնվում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ`

Վ. Խաչատրյանը նշեց, թե ինքը ուզում է հասկանալ, թե ի՞նչ օրակարգով են իրենք այս հարցը քննարկում, եթե պարոն Սերոբյանը որոշել է լուծարել գիտխորհուրդը ինչու՞ է իրենց ներկայացնում:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ իր պարտքն է համարում ընդամենը իրազեկել գիտական խորհրդին, որ հարցը ներկայացնելու է հոգաբարձուների խորհրդին, քանի որ ունեն կանոնադրության հստակ փոփոխություն և, իր կարծիքով, եթե ժամանակին հարցը չբարձրացնի, իրեն անգործության մեջ կմեղադրեն:

Այնուհետև պարոն Սերոբյանը ընթերցեց կանոնադրության փոփոխման ենթարկված 49-րդ կետը, ներկայացրեց հին և փոփոխված կետի ու ենթակետերի տարբերությունները, համադրեց հին ու փոփոխված տարբերակներով գիտական խորհրդի կառուցվածքն ու կազմը:

Պարոն Հայրապետյանը հարց ուղղեց, թե արդյո՞ք թվակազմի հարցը ռոտացիայով չի լուծվում:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ այս հարցը ռոտացիայով լուծելի չէ և շարունակեց, որ իրեն բացարձակ հաճելի չէ, որ տարբեր մարդկանց կողմից, դրանք կլինեն հոգաբարձուների խորհրդից, մեր բուհից, թե ֆեյսբուքյան էջերից, անընդհատ հնչեցնում են, որ գիտական խորհուրդը ոչ լեգիտիմ է:

Պարոն Հայրապետյանի կարծիքով եթե հոգաբարձուների խորհուրդն է գիտական խորհրդին այդպես որակում, ապա իրենք էլ կարող են հնչեցնել, որ հոգաբարձուների խորհուրդն է ոչ լեգիտիմ:

Լ. Մարտիրոսյանը պարոն Սերոբյանին հարցրեց, թե ինչքա՞ն ժամանակ է մնացել աշխատելու գիտական խորհրդին մինչև լիազորությունների դադարումը:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ դեռ 3 տարի ունեն:

Պարոն Մարտիրոսյանը նորից հարցում կատարեց, թե ի՞նչն է խանգարում, որ այդ 3 տարին էլ աշխատեն, այնուհետև գիտական խորհրդի նոր կազմ ընտրվի:

Ա. Մկրտչյանի կարծիքով ցանկացած օրենսդրություն կամ կանոնադրություն հետադարձ ուժ չունի:

Պարոն Սերոբյանը հակադարձեց, որ պետական ռեզիստրում գրանցման պահից կանոնադրության ցանկացած փոփոխություն պետք է մտնի ուժի մեջ:
Ս. Սարգսյանը հարց ուղղեց, թե հոգաբարձուների խորհուրդն ունի՞ իրավունք ինքնակամ գիտական խորհուրդը լուծարելու, ո՞րն է հիմքը:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ հիմքը կանոնադրության փոփոխությունն է. սկզբունքային փոփոխություն է տեղի ունեցել:

Ս. Սարգսյանի կարծիքով պարոն Սերոբյանի ներկայացրած փոփոխված կանոնադրությամբ գիտական խորհրդի հեղինակությունը բոլորովին էլ չի բարձացվում, քանի որ «Գիտական» բառը կարծես անտեսվում է, գիտական խորհրդի կազմում, իր կարծիքով, առաջնահերթ պետք է ընդգրկվեն դոկտորները:

Պարոն Հայրապետյանը շարունակեց պարոն Սարգսյանի միտքը, որ այլ համալսարանների գիտական խորհուրդների կազմում ազգային ակադեմիայից նույնպես ընդգրկված դոկտորներ կան, որոնք տվյալ բուհում չեն աշխատում, սա ուղղակի գիտական խորհրդի հեղինակության բարձրացմանն է նպաստում:

Պարոն Սերոբյանը առաջարկեց, որ այդ դեպքում ամբիոններում, որտեղ դոկտորներ կան, նրանց ամբիոնի կողմից ընտրեն:

Պարոն Խաչատրյանը էլ նշեց, որ ինքը հանձնաժողովում աշխատել է, սակայն այսօր ներկայացված կանոնադրության փոփոխված կետերում կան դրույթներ, որոնք իրենք չեն քննարկել, օրինակ, որ գիտական խորհրդում պետք է ընդգրկվեն բուհի ամենաերիտասարդ և անենաստարիքավոր դոկտորները:

Ա. Սարգսյանն ավելացրեց, որ հանձնաժողովում քննադատության է ենթարկվել գիտական խորհրդի նախկին կազմի բազմաքանակության հարցը՝ 40 անդամ, սակայն կանոնադրության նոր կետով նախատեսվում է 45 անդամ:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ հոգաբարձուների խորհուրդի կողմից առաջարկված և քննարկված հարցերը նույնպես տեղ կարող էին գտնել կանոնադրության մեջ:

Տիկին Պետրոսյանի կարծիքով, եթե կասկածի տակ է դրվում գիտական խորհրդի լեգիտիմության հարցը, ապա նրա ընդունած որոշումները նույնպես ոչ լեգիտիմ են:

Պարոն Սերոբյանը նշեց, որ իրավաբանական տեսանկյունից այս որոշումը կա:

Լ. Մարտիրոսյանը առաջարկեց, որ դիմեն հոգաբարձուների խորհրդին, որպեսզի բուհի գիտական խորհուրդն աշխատի մինչև իր լիազորությունների ավարտը, 5 տարին լրանալուց հետո միայն ընտրվի նոր կազմ:

Վ. Խաչատրյանը առաջարկեց, որ հոգաբարձուների խորհրդի կազմը հանդիպի գիտական խորհրդի անդամների հետ այս հարցը քննարկելու:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ 24 անդամներն էլ դժվար հավաքվեն, սակայն ինքը նույնպես կողմ է, որ հարցը համատեղ նիստում քննարկեն և եթե պարոն Խաչատրյանի կարծիքը կիսում է գիտական խորհուրդը, ինքը այն կներկայացնի հոգաբարձուների խորհրդի նախագահին:

Պարոն Հայրապետյանը անդրադարձավ նաև այն հարցին, որ ուսանողների քանակը, իր կարծիքով, շատ է գիտխորհրդի կազմում, ասենք դոկտորական դիսերտացիայի հաստատումը առնչվում է ուսանողի հետ, այն էլ բակալավրատում սովորող, գոնե գիտական խորհրդի անդամներ մագիստրներից ընտրվեն:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ կանոնադրությամբ արդեն հստակ ձևակերպված են այս դրույթները, եթե կային առաջարկություններ, պետք է ժամանակին ներկայացվեր հանձնաժողովին, իսկ գիտական խորհրդի անդամ- ուսանողներին ընտրում և ներկայացնում է ուսանողական խորհուրդը:

Ս. Սարգսյանին հետաքրքրում էր, թե կա՞ հանրապետությունում մի բուհ, որի կանոնադրությունը մոտ է մեր կանոնադրությանը:

Պարոն Սերոբյանը հարցրեց, թե ո՞րը, նախկինը, թե փոփոխվածը:

Պարոն Սարգսյանը պատասխանեց, որ 2-ն էլ, իր կարծիքով, ավելի խոշոր բուհեր կան, սակայն այսօր մենք առաջինն ենք արհեստական նոր դրույթներ մտցնում կանոնադրության մեջ:

Ա. Սարգսյանին հետաքրքրում էր նաև, թե ի՞նչ հիմքով է պարոն Սերոբյանը նման հարց առաջ քաշում. լեգիտիմության հետ կապված խոսակցությունների, թե՛ կանոնադրության փոփոխությունների:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ երկուսը միասին ինտեգրված:

Պարոն Հայրապետյանի կարծիքով պետք է ներկայացնել հոգաբարձուների խորհրդին, որ մենք կտրականապես մերժում ենք գիտական խորհրդի լուծարման հարցը, քանի որ ոչ լեգիտիմ չենք համարում մեզ և առաջարկում ենք հանդիպել՝ հարցի քննարկման նպատակով:

Պարոն Սերոբյանը համաձայնեց, որ ինքն այդպես էլ կներկայացնի այն հոգաբարձուների խորհրդի նախագահին:

Ս. Սարգսյանը դիտարկեց, որ եթե հոգաբարձուների խորհրդի նախաձեռնությունը չէ գիտական խորհրդի հարցի քննարկումը, չկա նրանց կողմից գրավոր առաջարկություն, ապա սա դատարկ խոսակցություն է և կոլեկտիվը համաձայն չէ նման հարց առաջադնելու:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ հոգաբարձուների խորհուրդը գրավոր առաջարկ չի ներկայացրել, սակայն ինքը գտնում է, որ սա իր պարտականությունն է և կներկայացնի գիտական խորհրդում հնչած առաջարկները, ապա առաջարկեց հստակ ձևակերպել գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՇՊՀ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյանի հաղորդումը «ՇՊՀ կանոնադրության 49, 50 կետերի փոփոխությունների և դրանցից բխող գիտական խորհրդի լուծարման հարցը հոգաբարձուների խորհրդին ներկայացնելու մասին» ընդունելի գիտություն:

2. Առաջարկել հոգաբարձուների խորհրդին հրավիրել համատեղ նիստ՝ վերոգրյալ հարցի քննարկման նպատակով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21անդամ. կողմ՝21 դեմ՝0, ձեռնպահ՝0:

3.1 ԼՍԵՑԻՆ՝

Հեռակա կրթական համակարգով սովորող ուսանողների տեղափոխվող ակադեմիական պարտքերի վարձավճարի մասին (ի փոփոխումն 07.02.2019թ.-ի թիվ 10/5 գիտական խորհրդի որոշման)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ի փոփոխումն 07.02.2019թ.-ի թիվ 10/5 գիտական խորհրդի որոշման՝ հեռակա կրթական համակարգով սովորող ուսանողների տեղափոխվող ակադեմիական պարտքերի վարձավճարի չափը բակալավրի կրթական ծրագրի համար հաստատել հետևյալ սկզբունքով. մեկ կրեդիտի արժեքը հաշվել տարեկան վարձավճարը բաժանելով ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան կրեդիտների վրա (48-ի):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

21անդամ. կողմ՝17 դեմ՝0, ձեռնպահ՝4:

Գիտական խորհրդի նախագահ՝
 Գիտական խորհրդի
 քարտուղար՝
 Արհմիութենական
 կազմակերպության նախագահ՝
 Բնագիտամաթեմատիկական
 ֆակուլտետի դեկան՝
 Սոցիալական գիտությունների և
 իրավունքի ֆակուլտետի դեկան՝
 Ռազմական ամբիոնի պետ՝
 Ուսումնագիտական
 խորհրդատվական կենտրոն-
 գրադարանի տնօրեն՝
 Արտաքին համագործակցության
 և հասարակայնության հետ
 կապերի կենտրոնի տնօրեն՝
 Տինանսատնտեսական
 վերլուծությունների,
 ծրագրավորման և
 հաշվապահական հաշվառման
 բաժնի վարիչ-գլխավոր
 հաշվապահ՝
 Անձնակազմի կառավարման և
 իրավական ապահովման բաժնի
 պետ
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Անգլերեն լեզվի և
 գրականության ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Հայոց լեզվի և գրականության
 ամբիոնի դոցենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 պրոֆեսոր՝

Ե. Սերոբյան
 Կ. Պետրոսյան
 Վ. Խաչատրյան
 Բ. Պողոսյան
 Օ. Հովհաննիսյան
 Ա. Մկրտչյան
 Թ. Խաչատրյան
 Հ. Մելքոնյան
 Ռ. Քալաջյան
 Ա. Հովհաննիսյան
 Ս. Սարգսյան
 Հ. Դրմեյան
 Ա. Հովհաննիսյան
 Ս. Հայրապետյան
 Ռ. Մարդոյան

Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետի դեկան՝
Միջմշակութային
հաղորդակցության և
զբոսաշրջության ամբիոնի
ասիստենտ՝
Մանկավարժության ամբիոնի
դոցենտ՝
Պատմության և
փիլիսոփայության ամբիոնի
դոցենտ
Մանկավարժության ամբիոնի
դոցենտ՝
Գիտական
քաղաքականության, որակի
ապահովման և կառավարման
կենտրոնի տնօրեն՝
Աշխարհագրության,
կենսաբանության և քիմիայի
ամբիոնի դոցենտ՝
ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ,
Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետ,
«Լրագրություն» 4-րդ կուրսի
ուսանողուհի՝
Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետ,
«Սոցիալական աշխատանք» 4-
րդ կուրսի ուսանողուհի՝
Անգլերեն լեզու և
գրականություն IV կուրսի
ուսանողուհի՝
Մանկավարժության
ֆակուլտետ, «Մեթոդիկա» 4-րդ
կուրսի ուսանողուհի
Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետ,
«Աշխարհագրություն» 4-րդ
կուրսի ուսանողուհի

Թ. Մելիքյան

Շ. Տեր-Ադամյան

Լ. Ղուկասյան

Հ. Խորիկյան

Լ. Հակոբյան

Ա. Սարգսյան

Լ. Մարտիրոսյան

Ջ. Ղազարյան

Ա. Խաչատրյան

Հ. Ավետիսյան

Է. Ավագյան

Լ. Հովհաննիսյան

ՈւԳԸ նախագահ,
աշխարհագրություն II կուրսի
ուսանող (մագիստրատուրա)՝

Ռազմական ամբիոն,
«Նախագորակոչային և
Ֆիզիկական պատրաստություն»
4-րդ կուրսի ուսանող՝
Պատմություն IV կուրսի
ուսանող (հեռակա
բակալավրիատ)

Ք. Հարությունյան

Ս. Հարությունյան

Ա. Չարչոլյան